ԿԱՐԾԻՔ

Դավիթ Կարապետյանի «Վախուշտի Արքայազնի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը որպես հայոց պատմության սկզբնաղբյուր» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Դավիթ Կարապետյանի Վախուշտի Արքայազնի «Վրացական թագավորության նկարագրությունը» ատենախոսությունը ինքնուրույն աշխատանք է և արդյունք Դավիթ Կարապետյանի ջանքերի ու պրպտումների: Հեղինակը իրավացիորեն գրում է, որ հայագիտության մեջ Վախուշտի Բագրատիոնիի անձը և աշխատութունը գրեթե ուսումնասիրված չէ՝ դրանով իսկ հիմնավորելով իր հետազոտության անհրաժեշտությունը:

Դավիթ Կարապետյանն իր ատենախոսության սկզբում ներկայացրել է Վախուշտի Արքայազնի կյանքն ու գործունեությունը: Նա բավական լավ է բացատրում, թե Վախուշտին ինչ վերաբերմունք է ունեցել հայերի հանդեպ: Հեղինակը այնուհետև դասդասել է Վախուշտիի՝ հայերի ու Հայաստանի մասին տարաբնույթ տեղեկությունները, որոնք, հաշվի առնելով աղբյուրագիտական նյութի սակավությունը, կարևոր նշանակություն են ձեռք բերում: Տպավորություն է, որ Դավիթ Կարապետյանը չի շրջանցել Վախուշտիի հաղորդած որևէ տեղեկություն ու փորձել է հնարավորին ամբողջական պատկեր ներկայացնել: Հեղինակի հետևությունները համոզիչ են՝ Վախուշտի Արքայազնի տեղեկությունները, իսկապես, երբեմն բացառիկ են Հայոց պատմության առանձին դրվագների վերականգնման համար:

ԳԱԱ Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնում գործը քննարկվել է, բաժինը դրական է գնահատել Դավիթ Կարապետյանի աշխատանքը: Բաժինը ներկայացրել է դիտարկումներ, որ հատկապես վերաբերում են ատենախոսության տեսական դրույթներին.

1. Վախուշտի Բագրատիոնիի անձնին ու մտածողությանը, մտածողության ձևավորմանը, աշխարհայացքին, պատմահայեցողությանը ավելի մեծ տեղ պետք էր հատկացնել, պատասխանել հարցին՝ ինչով է շաղախված նրա մտածողությունը, տեղորոշել նրան անցյալի ու իր ժամանակ միջև: Ընդհանրապես պետք էր պատասխանել հարցին՝ Վախուշտի Բագրատիոնին վրաց պատմագրության դասակա՞ն ներկայացուցիչ է, թե՝ ոչ, և որտեղ և ինչ միջոցով է ձևավորվել նրա «գիտական բազան», նրա աշխարահայցքի վրա ի՞նչ ազդեցություն է ունեցել ռուսական աշխարհը, ծանոթ եղե՞լ է եվրոպական ժամանակակից գիտությանը:
2. Դավիթ Կարապետյանը Վախուշտի Բագրատիոնիին կոչում է գիտնական, ինչը խնդրահարույց է և լրացուցիչ մեկնաբանության կարիք է զգում: Արդյո՞ք Վախուշտիի գործում չկան ոչ գիտական ձևակերպումներ կամ միջնադարյան ավանդական մտածողության հետքեր: Կարծում ենք՝ տեղին չէ Վախուշտի Բագրատիոնիին գիտնական ու հետազոտող կոչել:
3. Երրորդ գլխի առաջին ենթավերնագիրը վերնագրված է «Թիֆլիսին և տեղի հայերը 17-րդ երկրորդ կեսին և 18-րդ դարի սկզբին ըստ Վախուշտիի ու այլ աղբյուրների»: Առաջարկում ենք այլ աղբյուրներ ձևակերպումը վերնագրից հանել: Առաջին հերթին պետք է քննել Վախուշտիի տեղեկությունները՝ համեմատելով այլ աղբյուրների հետ:
4. «Հայաստանը և Վրաստանը Սեֆյան պետության և Օսմանյան կայսրության հակամարտության ոլորտում ըստ Վախուշտիի հաղորդած տեղեկությունների» ենթագլուխը հիմնականում կառուցված է այլ աղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա: Այդ պարագայում կարծում ենք արդարացված մոտեցում չէ 35 էջ հատկացնել այդ ենթագլխին:

5. Հեղինակը օգտագործել է թե՛ Հարավային Կովկաս, թե՛ Այսրկովկաս տերմինները, մինչդեռ նախընտրելի է Հարավային Կովկասը:

6. Ճիշտ կլիներ Թուրքիա եզրի փոխարեն օգտագործել Օսմանյան կայսրություն (Օսմանյան պետություն) եզրը:

Դավիթ Կարապետյանի «Վախուշտի Արքայազնի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը որպես հայոց պատմության սկզբնաղբյուր» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ, համապատասխանում է ԲՈԿ-ի չափորոշիչներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի պ.գ.թ., դոցենտ Ա. Շահնազարյան
Միջին դարերի պատմության բաժնի վարիչ
25/8/2020

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ա. Շահնազարյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան

25.08.2020